բացնում են բերդը, և որպէս զի՝ միւս անգամ պարսիկները կամ հագարացիք չյարձակուեն իրենց վրայ՝ ազգովին ընդունում են մահմէդական կրօնը, որ յառաջ կռապաշտ էին. սրանց հետեւելով և Ալանք, որ նոր էին Քրիստոնեայ դարձել Աղուանից Իսրայէլ եպիսկոպոսի քարոզութեամբն, ընդունում են Մահմէդի կրօնը—և այնուհետեւ պատերազմները շարունակում են Հայ և Վրացի և Աղուան քրիստոնէից հետ։ Գրում է (Դարբանդ Նամէն) թէ՝ Մրուան Հագարացի յարձակելով Դարբանդի վրայ ճնշեց և նեղեց լեռնականաց, որք ապստամբել էին Հագարացւոց դէմ, բայց յետոյ Եզիտ ոստիկանը գալով՝ սկսում է բերդը շինել և Դարբանդի բերդը նորոգել և ամրացնել, և այնպէս հանդարտացնել լեռնականաց»։

Վերջապէս Ալանք, Հոնք և Խազիրք (Լէզգիք, Չէրքէզք և Չաչանք) նեղանալով պարսից և հագարացւոց հարստահարութիւնից և բռնութիւնից ամենայն զօրութեամբ միանալով միմեանց հետ իսպառ հեռացրին իրենցից նոցա իշխանական լուծը, 350 տարի յառաջ, և այնպէս այսքան տարին ազատութեամբ պահեցին—իրենց աշխարհները ոչ ոքի հարկ չ'հատուցանելով, և երբեմն եւս դեռ յարձակելով պարսից իշխանութեան երկիրներն՝ Զաքի, Զիրուան, Գանձակ, և մինչև անգամ Երեւանայ շրջակայքը, ինչպէս Առաքել պատմագիրը գրում է։

Վերջապէս այս 19րդ դարու սկզբներում, երբ Վրաստանը անցաւ ռուսաց կայսրութեան ձեռքը, և ռուսք իշխեցին նաեւ Հայաստանի մի մասին Արցախեան և Երեւանեան նահանգաց, ուշ դարձրին նաեւ յիշեալ լեռնականաց վրայ և բաւական տարիք պատերազմելով նոցա հետ, մանաւանդ Զամիլ խմամի տիրապետութեան և զօրավարութեան ժամանակը՝ 1840—1860, ի վերջոյ 1859 թուին օգոստոս 25՝ Զամիլի զերի բռնուելովը՝ Դաղստանը, այն է բոլոր լեռնականք Կովկասու խոնարհեցան ռուսաց հզօր կայսրութեան փառաւոր դրօշակի ներքոյ, և վայելում են խաղաղութիւն։

Ղեւոնդ պատմիչը (Գլ. ԼԹ. 160) Դարբանդի ամրութեան համար այսպէս գրէ.